

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԷՊԻ

Նոր Գեղարքի շինարարական խումբը :

Երբեք անուշադրուհի ճարտարապետը մեքենայ մը հնարեր է, որուն շարժումները տուողը շոգիլին տեղ անգայտացած օգուն զօրութիւնն է : Իր շինած մեքենան որ 60 ձիու ուժ ունի՝ չորս հատ օգահան խողովակէ կը ձևանայ՝ որոնց փողերուն տրամագիծն է 158 բլթաչափ, իսկ միւսըներունը 72 բլթաչափ : Երկու օգահանը պաղ օգը ճնշելու կը գործածուի, իսկ միւս երկուքը նոյն օգը ջերմութեամբ անգայտացնելու : աս վերջի երկու խողովակներուն տակը մէյմէկ վառարան կայ, որուն մէջ առանց բոց հանելու ածխէ մեղմ կրակ մը կը վառի : իսկ ածուխէն ելած կազը նուրբ խողովակով մը կը ցնդի : Աս նոր օգաշարժ մեքենան՝ շոգեշարժներուն համեմատութեամբ շատ աւելի շահաւոր է : մէյմը որ ճաթէրու վախ չկայ, երկրորդ վառելու նիւթն ալ ոչինչ ծախսով կ'ըլլայ : և երրորդ ստէպ ստէպ կենտրոն և ածուխ առնելու համար ժամանակ կորսնցնել չունի : նմանապէս մեքենայներն ալ շատ նորոգութիւններու կարօտութիւն չեն ունենար՝ ինչպէս շոգեշարժներունը : Երբեքներն շինած մեքենան՝ որ Պոսթըն քաղաքին մէջ ցոյցի գրուած է, ամէն աւելի է որ կը բանի, և վրան նորոգութիւն մը եղած չէ : Հիմա Նոր Երբ ընկերութեան մը ծախքով այսպիսի օգաշարժ մեքենայ մը շինուելու վրայ է՝ որ 2200 տակառաչափի նաւու մը վրայ պիտի յարմարցուի :

Հետք ունի :

ԱՆՍՏՐԱԼԻԱՅԻ ռուսաց հանքերու վրայ օրագիր մը աս տեղեկութիւններս կու տայ . « 40 կամ 45,000 ֆունտը վաստակելու համար՝ բաւական է, կ'ըսէ, ութը քառակուսի ոտք ընդարձակութեամբ ու 6էն ինչուան 40 ոտք խորութեամբ տեղ մը փորել . հոն չափաւոր աշխատող գործաւոր մը տարին 30,000 ֆունտը զուտ վաստակ կըրնայ ընել . իսկ բաղդն որ քիչ մը օգնէ՝ անհամեմատ աւելի կը շահի . եղած է որ շարժութեան մէջ գործաւոր մը 1400 լիւրայ սթերլին (35,000 ֆունտ) վաստակի, չորս հոգի ալ երկու ամսուան մէջ մի լիոն մը վաստակած են : — Այսու ամենայնիւ ատ աւետեաց երկրին մէջի նեղութիւններն ալ անտանելի են . իրաւ ոսկին առատ, բայց ուրիշ ամէն բանի նուազութիւն է . և ինչ որ Քալիֆորնիային համար կ'ըսուէր՝ Աւստրալիային համար հազարապատիկ իմանալու է . որովհետեւ իր գիւղքը առջինէն աւելի աշխարհիս առեւարական և երկրագործական մասէն հեռու է : Մէկը կը գրէ թէ հաց ըսածդ շնորհքի մը պէս ընդունելու է, և ինչ ստակ ալ տաս բանի չգար . գոյլ մը ջրի համար 5 շիլին (6 ֆունտ և 25 հար) վճարելու է, և

ձիու վարսակին մէկ չափը 30 շիլին (37 ֆունտ 50 հար) է : Այսպէս նաև ուրիշ բաները . անոր համար զգեստներն լուաքքի տալ չըլլար, երբ ազտութիւն զանոնք կը նետեն ու նոր կը գնեն : Ոսկւոյն սիրոյն համար ամէն մշակութիւն երեսփ վրայ մնացած է, անանկ որ եթէ յանկարծ անյաջող օգերուն պատճառաւ պաշար բերող նաւերը ըստ ժամանակին չհասնին, ամէնքը մեռնելու վրտանգի մէջ են, որն որ հին աշխարհք քանի մը ագահներու կը պատահի ռսկւոյ մէջ լողալով հոգիներն աւանգել, » :

Երբեք խորհուրդ :

ԽՆԴՈՒՅՆ հիմա կարծուէր թէ ծովուն ամենէն խոր տեղը՝ ինչուան ուր որ մարդիկ կ'ընդունեն չափել, փարսախ մը միայն ըլլայ . հիմա Գլենսի անուշով ամերիկացի պատերազմական նաւը՝ որ Արեւմտեան Հնդկաստանի և Աֆրիկէի մէջ տեղի խորութիւնները չափելու համար ղրկուած էր, կը հաստատէ թէ Պերմուտեան կղզեաց արեւելեան կողմը իրեն գունաւոր հասեր է ինչուան 34,200 ոտք խորութիւն :

Կրիայ ինչ :

ԲԱՐԵՅՈՒՍՈՆ Գլենսի ծովային հիւանդանոցին բժիշկը Շի, Նիկիլէրրայի թագուհւոյն ցամաքի կրիայ մը ընծայ ղրկեր է, որ ինչուան հիմա տեանուածներուն մէջ ամենէն մեծն է . թէ ինչուան պոչին ծայրը 7 ոտք է, բարձրութիւնն ալ 3 ոտք, մարմնոյն հաստութիւնը 7 ոտք և 8 բլթաչափ է, իսկ գլուխը մարմնոյն համեմատութեամբ շատ պղտիկ է, այսինքն 8 բլթաչափ երկայն, 6 բլթաչափ լայն . կռնքիին վրայ չորս հոգի ալ կենան՝ նոյնպէս գիւրաւ կը քալէ . կ'երևայ թէ 180 տարուան մը պիտի ըլլայ :

Մեքենաներու գործածութեան համար Նոր Գեղարքի խումբը :

ԳԱՂԱՅԻՍՈՒ ու Գերմանացի բնաշիններու ընկերութիւն մը աս մօտերս տեսակ մը ձէթ գտաւ մեքենայներու գործածութեան համար՝ որ կենդանական նիւթերէ կը հանուի . ասոր առաւելութիւնը ասիկայ է որ ամենին թթուի խառնուրդ չունի, որով և գործիքները չմաշեցնեն, անհոտ է ու առանց տորտ ձգելու ինքիւրմէ ցնդելով ամենեւին մաքրելու կարօտութիւն չեն ունենար մեքենայները :